ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2013թ.N 9

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ,, ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 27.06.2013թ-ի N 661 որոշումը ավագանին

որոշում է

1/ Դեղձուտ համայնքի վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 286.0հազ.դրամով՝ որպես սուբվենցիա, որից՝

-260.0հազ. դրամը ուղղորդվում է նվազագույն աշխատավարձի բարձրացմանը. ծրագիր՝Կառավարման մարմնի պահպանում(01.01.01.51),հոդված՝4111:

-26.0հազ.դրամը հատկացվել է 01.01.01.51 ծրագրի էլ. էներգիայի ծախսերի ավելացմանը՝ հոդված-4212, կապված էլ. էներգիայի վարձավճարի ավելացման հետ:

2/Վարչական բյուջեի 11.01.02.51ծրագրի 4891 հոդվածից հանվել է 738.0հազ. դրամ և հատկացվել է 01.01.01.51 ծրագրի հետևյալ հոդվածներին՝

-409.0հազ.դրամը հատկացվել է 4112 հոդվածին, որպես համայնքային ծառայողների պարգևատրման գումար:

-20.0հազ.դրամով ավելացվում է 4231հոդվածը՝ ,,Մխչյան" համայնքների միության սպասարկման և ծառայությունների համար:

-35.0հազ.դրամը ուղղվում է հոդված 4234-ին ,,Ցենզոր" Տեղեկատվական-վերլուծական Կենտրոնի համակարգչային ծառայությունների մատուցման համար:

-250.0 հազ.դրամը ուղղվում է ընդ. բնույթի ծառայություններ՝ հոդված 4239-ին,որպես ,,Կառավարման տեղեկատվական համակարգի,, ներդրման վճար,

-24.0հազ.դրամը ավելացվել է 4214 հոդվածին՝ Կապի ծառայության համար:

3)Ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 158928դրամի չափով՝ որպես հողի օտարման գումար: Այդ գումարը նախատեսել է 01.01.01.51 ծրագրի 5122 հոդվածին: Հոդվածին ուղղված 158929դրամը օգտագործվելու է համակարգչի ձեռք բերման համար:

Ավագանու անդամներ՝

Ա. Նազարյանը կողմ
Ս. Շահբազյանը կողմ
Ց. Մովսիսյանը կողմ
Հ. Շահբազյանը կողմ

Դեղձուտ համայնքի ղեկավար՝ /Յ. Մուրադյան/